Հրաման

229/46-L 14 դեկտեմբեր, 2016

Ընդունող մարմին **Ռեկտոր**

Կարգավիճակ **Գործում է**

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ» ԴԱՍԸՆԹԱՑԸ ԿՐԿՆԵԼՈՒ ԵՎ ՍՏՈՒԳԱՐՔԸ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԿԱՐԳ

Երևանի պետական համալսարանում կազմակերպվող ուսումնական գործընթացի արդյունավետությունն ապահովելու նպատակով

հրամայում եմ.

1. Սահմանել, որ.

ա) Ուսումնական կիսամյակի ընթացքում «Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն» դասընթացից 50-80 տոկոս բացակայություն ունեցող ուսանողների (առկա և հեռակա ուսուցման համակարգերի) ստուգարքն ընդունվում է քննական հանձնաժողովի միջոցով։

բ) Ուսումնական կիսամյակի ընթացքում «Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն» դասընթացից 80 տոկոս բացակայություն ունեցող ուսանողները (առկա և հեռակա ուսուցման համակարգերի), հաջորդ ուսումնական կիսամյակում վճարովի հիմունքներով (վճարումը կատարվում է ըստ կրեդիտների քանակի) կրկնում են այդ դասընթացը, իսկ դասընթացի ստուգարքն ընդունվում է հանձնաժողովի կողմից։ Ուսանողի կողմից դասընթացը կրկնելու դեպքում վճարումները կատարվում են կիսամյակը սկսվելուց հետո երկու շաբաթվա ընթացքում։

գ) Դասընթացը կրկնելու թույլտվություն ստացած, բայց չմասնակցած ուսանողներին թույլատրվում է հաջորդ ուսումնական կիսամյակում վճարովի հիմունքներով կրկնել դասընթացը՝ բացառությամբ ավարտական կուրսերի ուսանողների։

դ) Լրացուցիչ դասընթացին մասնակցած, բայց ստուգարքը չհանձնած ուսանողներին կարող է տրվել վճարովի հիմունքներով վերահանձնման երկու հնարավորություն՝ ստուգարքը մինչև տվյալ ուստարվա քննաշրջանի ավարտը հանձնելու պայմանով։

ե) սույն հրամանի «գ» և «դ» կետերի պահանջները չկատարելու դեպքում ուսանողը հեռացվում է համալսարանից։

2. Սույն հրամանի մասին իրազեկել ԵՊՀ սովորողներին։

3.Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից։

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am